

Ինչպես ներկայացնել բողոք

Ցանկացած անձ, կազմակերպություն կամ պետական հաստատություն կարող է ուղարկել փոստով, ֆաքսով կամ գրավոր UCP բողոք հետևյալ հասցեով՝

Julie Hall-Panameño, Director
Educational Equity Compliance Office
Los Angeles Unified School District
333 South Beaudry Avenue - 20th Floor
Los Angeles, CA 90017
Fax: (213) 241-3312
EquityCompliance@lausd.net

Ցանկացած հաշմանդամություն ունեցող անձ կամ նա, ով չի կարող գրավոր բողոք պատրաստել, կարող է ստանալ աջակցություն տեղամասի ադմինիստրատորից/պաշտոնակատարից կամ զանգահարել EECO հետևյալ հեռախոսահամարով՝ (213) 241- 7682:

Շրջանը երաշխավորում է, որ գաղտնիությունը առավելագույնս կպահպանվի: Բողոք ներկայացնողները պաշտպանվում են վրեժխնդրությունից: Շրջանն արգելում է որևէ անձի հետապնդում, ով ներկայացրել է բողոք կամ մասնակցել է բողոքի քննության գործընթացին:

Կրթական օրենսգրքի §262.3-ի համաձայն՝ բողոք ներկայացնող անձանց բացատրվում է, որ քաղաքացիական իրավունքի պաշտպանության միջոցները կարող են լինել նաև հասանելի խտրականության, ոտնձգության, ճնշման գործարքման և/կամ ահաբեկման մասին պետական կամ դաշնային օրենքների շրջանակներում:

Շրջանի UCP-ի կանոնների և բողոքարկման ընթացակարգի պատճենը պետք է տրամադրվի անվճար:

UCP-ի վերաբերյալ հարցերի համար դիմել դ-ր Ջոզեֆ Գրինին, UCP-ի կոորդինատորին, հետևյալ հեռախոսահամարով՝ (213) 241-7682:

Բողոքի քննություն և պատասխան միջոցներ

Ցանկացած բողոք ուսումնասիրվում է Շրջանի համապատասխան գրասենյակի կողմից, որը տեղյակ է օրենքների, ծրագրերի և UCP կանոններին/ընթացակարգերին համապատասխանության BUL-5159.9
Office of the General Counsel

վերաբերյալ: Քննության և Շրջանի պատասխան միջոցները հետևյալն են.

1. Հնարավորություն է տրվում բողոք ներկայացնողին և Շրջանի աշխատակազմին ներկայացնել բողոքի հետ առնչվող տեղեկատվություն:
2. Ձեռք է բերվում համապատասխան տեղեկատվություն այլ անձանց կողմից կամ վկաներից, որոնք կարող են տրամադրել սպացույցներ:
3. Ուսումնասիրվում են համապատասխան փաստաթղթեր:
4. Պատրաստվում է գրավոր զեկույց անգլերեն կամ բողոք ներկայացնողի մայրենի լեզվով, որը պարունակում է ուսումնասիրության արդյունքում կատարված բացահայտումները և Շրջանի վճիռը, ներառյալ ուղղիչ գործողություններ:
5. Քննությունը եզրափակվում է գրավոր զեկույցի ուղարկմամբ բողոքատուին գրավոր բողոքը ստանալու պահից 60 օրվա ընթացքում, եթե նա չի ներկայացնում գրավոր համաձայնություն երկարաձգելու քննության ժամկետը:
6. Տրամադրվում են բողոքարկման ընթացակարգերը:

Ինչպես բողոքարկել


UCP-ին վերաբերող ծրագրերի և գործողությունների վերաբերյալ Շրջանի որոշումներն/եզրակացությունները կարող են բողոքարկվել նահանգում՝ գրավոր բողոքարկում ներկայացնելու միջոցով՝ Շրջանի որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Դիմումը պետք է բացատրի որոշման բողոքարկման հիմքը, նշի Շրջանի որոշման սխալները և/կամ օրենքի սխալ կիրառումը և ներառի նախնական բողոքի պատճենը և Շրջանի որոշումը: Բողոքարկումը պետք է ուղարկել.

California Department of Education
1430 N Street
Sacramento, CA 95814
<http://www.cde.ca.gov/re/cp/uc>

Քննության և Շրջանի պատասխան միջոցների համար նախատեսված 60 օրյա ժամկետը սկսվում է գրավոր բողոքը ստանալու պահից:

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջան

Բողոք ներկայացնելու միաձև ընթացակարգ (UCP)



Կրթական արդարության ապահովման գրասենյակ (EECO)

(213) 241-7682

Ինչու՞ այս բրոշյուրը

Սա ամենամյա ծանուցում է բոլոր շահագրգիռ կողմերին այն մասին, որ Շրջանի հիմնական պատասխանատվությունն է ապահովել համապատասխանությունն նահանգի և պետական կիրառվող օրենքներին և իրավական ակտերին և ուսումնասիրել այդ օրենքների և իրավական ակտերի անհամապատասխանության, այդ թվում ցանկացած պաշտպանված խմբի հանդեպ խտրականության, ոտնձգության, ճնշման գործադրման և/կամ ահաբեկման վերաբերող բողոքները կամ այդ բրոշյուրում նշված UCP-ին ենթակա բոլոր ծրագրերին և գործողություններին վերաբերող օրենքներին անհամապատասխանությունը: Շրջանը ձգտելու է գտնել այդ բողոքների լուծումները՝ Կալիֆորնիայի օրենսգրքի §§4600-4687-ում սահմանված ընթացակարգերի և Շրջանի քաղաքականության ու ընթացակարգերի համաձայն, այդ թվում, վրեժխնդրության հետ կապված բողոք ներկայացնելու կամ UCP-ի գործընթացին մասնակցելու համար հետապնդման հետ և/կամ բողոքարկելու Շրջանի որոշումները բողոքների վերաբերյալ:

Խնամքի տակ գտնվող աշակերտների, անօթևան երեխաների, նախկինում անչափահասների դատարանի իրավասության ներքո գտնվող և այժմ Շրջանում ընդգրկված աշակերտների, զինվորականների ընտանիքներից աշակերտների համար կրթական իրավունքների և բողոքարկման գործընթացների ստանդարտացված ծանուցումը տեղադրված է ինչպես նշված է Կրթական օրենսգրքի (EC) §§48645.7, 48853, 48853.5, 49069.5, 51225.1 և 51225.2-ում:

UCP-ում ընդգրկված պաշտպանվող կատեգորիաներ

Անօրինական խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման կամ սպառնալիքների վերաբերյալ բողոքները կարող են վերաբերել հետևյալ պաշտպանված կատեգորիաների աշակերտներին, նշված Քրեական օրենսգրքի §422.55-ում, Կրթական օրենսգրքի §220-ում և Նահանգի օրենսգրքի §11135-ում. փաստացի կամ ենթադրյալ սեռ, սեռական կողմորոշում, գենդեր, գենդերային անհատականություն, գենդերային դրսևորում, ռասան կամ էթնիկական խումբ, էթնիկական խմբի նույնականացում, ծննդաբանություն, ազգություն, ազգային ծագում, իմիգրացիոն կարգավիճակ, կրոն, մշակի գույն, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ, տարիք կամ ասոցիացիա մի անձի կամ խմբի հետ, որին համապատասխանում է մեկ կամ ավելի վերը նշված փաստացի կամ ենթադրյալ կատեգորիաներ: Դա մտնում է Շրջանի կողմից իրականացվող ցանկացած ծրագրերի կամ գործունեության շրջանակների մեջ, կամ այն ծրագրերի և գործունեության շրջանակների մեջ, որտեղ դա ցուցաբերում է նշանակալի աջակցություն:

Խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման կամ սպառնալիքների մասին բողոքները պետք է BUL-5159.9
Office of the General Counsel

ներկայացվեն դեպքը տեղի ունենալու կամ դեպքի մասին փաստերն առաջին անգամ ձեռք բերելու պահից սկսած 6 ամսվա ընթացքում:

UCP- ի շրջանակները

- Պաշտպանված խմբերի ներկայացուցիչների անօրինական խտրականություն, ոտնձգություն, ահաբեկում կամ սպառնալիքներ (աշխատակից-աշակերտին, աշակերտ-աշակերտին, երրորդ կողմ-աշակերտին)

Այլ ծրագրեր և գործողություններ UCP-ի շրջանակներում.

- Չափահասների կրթություն
- Արտադպրոցական կրթություն և անվտանգություն
- Գյուղատնտեսական մասնագիտական կրթություն
- Հնդիկ ամերիկացիների կրթության կենտրոններ և վաղ կրթության ծրագրի գնահատումներ
- Երկլեզու կրթություն
- Կալիֆորնիայի կոլեգաների օգնություն և Վերանայման ենթակա ծրագրեր ուսուցիչների համար
- Մասնագիտական/տեխնիկական կրթություն, մասնագիտական տեխնիկական և տեխնիկական կրթություն, և տեխնիկական պատրաստում (նահանգի մակարդակ)
- Մասնագիտական տեխնիկական կրթություն (պետական մակարդակ)
- Երեխայի խնամք և զարգացում
- Մանկական սնունդ
- Կոմպենսացիոն կրթություն
- Համախմբված դասակարգային օգնության ծրագրեր
- Կրթական բովանդակություն չունեցող ուսումնական ժամանակահատվածներ
- Օգնություն տնտեսական ազդեցության պարագայում
- Խորթ, անօթևան երեխաների, նախկինում անչափահասների դատարանի իրավասության ներքո գտնվող և այժմ դպրոցական շրջանում ընդգրկված աշակերտների, զինվորականների ընտանիքներից աշակերտների, միգրանտների, նորեկների ծրագրերին մասնակցող աշակերտների կրթություն
- Յուրաքանչյուր աշակերտի հաջողության մասին ակտ /Ոչ մի երեխա ետևում (Բաժիններ I-VII)
- Տեղային վերահսկողության և հաշվետվության պլան (LCAP)
- Միգրանտների կրթություն
- Ֆիզիկական կրթության համար նախատեսված ժամանակ
- Աշակերտի կրթական վճարներ
- Համապատասխան հարմարություններ կերակրող և հղի աշակերտների, ինչպես նաև երեխաներ ունեցող աշակերտների համար
- Տարածաշրջանային զբաղվածության կենտրոններ և ծրագրեր

- Դպրոցի անվտանգության պլանները
- Հատուկ կրթություն
- Պետական նախադպրոցական հաստատություններ
- Օլիախոտի օգտագործման կանխման ուսումնական ծրագիր

Շրջանի դպրոցում ընդգրկված աշակերտից չպետք է պահանջվի աշակերտական վճար կրթական գործունեությանը մասնակցելու համար: Աշակերտական վճարները դա այն վճարներ են, որոնք աշակերտից գանձվում են որպես դպրոցում կամ դասընթացում գրանցման պայման, կամ որպես դասարանային կամ արտադասարանային գործունեության մասնակցության պայման, անկախ նրանից, թե այն ֆակուլտատիվ է, թե պարտադիր, թե վերաբերում է կրեդիտային համակարգին: Դրանք կարող են գանձվել գրավային ավանդի տեսքով կամ այլ ձևով, օրինակ՝ աշակերտից պահանջվում է գնել փական, դարակ, գիրք, մարմնամարզական սարք, երաժշտական գործիք, հագուստ կամ այլ նյութեր կամ սարքավորումներ: Աշակերտին կարող են պարտադրել գնել կրթական գործունեության հետ կապված նյութեր, պարագաներ, սարքավորումներ կամ հագուստ: Աշակերտի վարձավճարի մասին բողոքը կարող է ներկայացվել դպրոցի տնօրենին, վերակազմի կամ նշանակված անձին:

Դիմումը կարող է անանուն կերպով ներկայացվել, եթե այն տրամադրում է ապացույցներ կամ տեղեկություններ, որոնք հիմք են հանդիսանում խախտման մասին հայտարարության համար, ներառյալ աշակերտական վճարները և LCAP-ի հետ կապված խախտումները: Աշակերտի վճարի վերաբերյալ բողոքը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել:

Շրջանը կփորձի բարեխղճորեն զբաղվել այդ խնդրով, որպեսզի բացահայտի և ամբողջությամբ հատուցի բոլոր աշակերտներին, ծնողներին/խնամակալներին այն գումարը, որը նրանք վճարել են մեկ տարվա ընթացքում մինչև բողոքի ներկայացումը:

Եթե բողոքը հիմնավորված է, ապա տուժած աշակերտին տրամադրվում է իրավունքի պաշտպանման միջոց այն դեպքերում, որոնք կապված կրթական բովանդակություն չունեցող ուսումնական ժամանակահատվածների հետ, կերակրող աշակերտուհիների համար հարմար սենյակի հետ, խնամքի տակ գտնվող աշակերտների, անօթևան երեխաների, նախկինում անչափահասների դատարանի իրավասության ներքո գտնվող և այժմ Շրջանում ընդգրկված աշակերտների, զինվորականների ընտանիքներից աշակերտների կրթության հետ: Իրավունքի պաշտպանման միջոցը տրամադրվելու է բոլոր տուժած աշակերտներին և ծնողներին/խնամակալներին այն դեպքերում, որոնք վերաբերում են աշակերտական վճարներին, Ֆիզիկական կրթության համար նախատեսված ժամանակին և / կամ LCAP-ին: